# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ minister@minfin.am

Հեռ.՝ (+374 60) 700 304, ֆաքս՝ (+374 60) 700 358
Վեբ կայք՝ www.minfin.am


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

ՀՀ ֆինանսների նախարարությունը քննության առնելով Ձեր 16.03.2016թ. N01/06/509-16 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N1555-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու և ըստ ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության չափաքանակները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի N181-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, հայտնում է հետևյալը.

Նախագծով առաջարկվում է ՀՀ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում նախատեսված առաջնահերթ հակահեղեղային միջոցառումների իրականացման նպատակով «Մելիորացիա» ՓԲԸ-ին տրամադրելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) 2016 թ. առաջին կիսամյակում հատկացնել 677,600.0 հազ. դրամ՝ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից, ինչպես նաև հաստատել ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» ծրագրով չբաշխված 2,981,780.8 հազ. դրամ գումարի բաշխման չափաքանակներն ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների (այսուհետ՝ ՋՕԸ):

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով: Արգելվում է ֆինանսական միջոցներ նախատեսել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ հոդվածներով, եթե այդ միջոցների հաշվին պետք է կատարվեն գնումներ:

Հետևաբար նկատի ունենալով, որ նախագծի 2-րդ կետով հատկացվող միջոցների հաշվին նախատեսվում է աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, ուստի առաջարկում ենք նախագծով նախատեսվող միջոցները հատկացնել Կոմիտեին՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման գնումների համապատասխան հոդվածներով, ինչպես նաև նախագծին կից ներկայացնել գնումների պլանի փոփոխություն:

Բացի այդ ճշգրտման կարիք ունեն ՋՕԸ-ների ֆինանսական ճեղքվածքը մարելու նպատակով Նախագծի N4 հավելվածով ըստ առանձին ՋՕԸ-ների 2,981,780.8 հազ. դրամ գումարի բաշխման չափաքանակները:

Միաժամանակ անհրաժեշտ է Նախագծի N3 հավելվածի վերջին սյունակում 1.1 տողի «0.8» թիվը փոխարինել «800.0» թվով, 1.3 կետի «0.9» թիվը՝ «900.0»-ով, 3.1 և 3.2 կետերի «0.6» թիվը՝ «600.0»-ով:

Հարգանքով՝

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

????? ?????????
Mar 16 2016 6:37 PM +04:00

Կատարող՝ Արմինե Նորեկյան
հեռ. 011 800-238